ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Արարատի մարզի << Ուրծաձորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի ֆրանսերեն / 22 դասաժամ /, տեխնոլոգիա 1-ին խումբ / 7 դասաժամ /, տեխնոլոգիա 2-րդ խումբ / 7 դասաժամ / ուսուցչի թափուր տեղերի համար :

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և հարցազրույց ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի :

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է / Ձև 1 /
2. Փաստաթուղթ / դիպլոմ/ << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճեն,
4. Ինքնակենսագրություն / Ձև 4 /,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները / դրանց առկայության դեպքում /
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հասաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ :

Փաստաթղթերն ընդունվում են մայիսի 11-ից մինչև մայիսի 24-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10⁰⁰—ից 15⁰⁰—ը, բացի, շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի :

Մրցույթը տեղի կունենա մայիսի 26-ին ժամը 14⁰⁰—ին, Արարատի մարզի Ուրծաձորի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ գ. Ուրծաձոր Տիգրան Մեծի 30-ն :

Տեղեկությունների համար զանգահարել՝ / 0234 / 86-1-51 հեռախոսահամարով :

Հ/Հ կոդ -- 04103833